

Թիւ 1035  
Փետրուար 16, 1960

Արժանաշնորհ  
Տ. Միքայէլ Գութէրո  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
Նիւ Գրիթըն.

Սրբիւ Տէր Միքայէլ.

Ստացած ենք 1960 Յունուար 24 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը տեղեկացնէք թէ Ձեր նախագահութեամբ գումարուած Միական Ժողովին մէջ ընտրուած են Միական Խորհուրդի նոր անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձնուին վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալ անձերը ըստ օրինի ընտրուած են եւ իրրեւ Եկեղեցւոյդ պարտաճանաչ անդամներ կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը հետեւեալ կարգով.-

- Տիարք՝ Փիթըր Եզիագարեան
- Հարրի Ազարիկեան
- Մանուկ Գաղտիկեան
- Վարդան Ազարիկեան
- Ստեփան Տէր Մարկոսեան
- Արթուր Սիմոնեան

Կ'օրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք ձեզ ու պատուարժան Միական Խորհուրդիդ համերաշխ եւ բեղմնաւոր գործունէութիւն ի պայծառութիւն Հյաստանեանց Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մեծք Տիրուանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Ազօթարար

ՍՒՈՆ ԱՐԺԵԳԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի